


Եղերուն



Exported from Wikisource on 08/05/20

Եղերուն

← [Գրազունկուն](#) [Հոգիաններ](#) →
[Հոգիաններ](#)

[84]

ԵՂՋԵՐՈՒՆ

Մի սեպտեմբերի մեր գյուղացի որսկան Օսեփը ինձ գիշերակաց որսի տարավ Եղնուտի կիրճը: Գիշերներն էղ կիրճով Եղերուներն իջնում են ձորերն ու հովիտները, արածում են, արշալուսից առաջ ջուր են խմում ու Էլ ետ իրենց «պնդոցն» են տալի:

Գնում Էինք գիշերը մնանք բոստանչի Օվակիմի դափումը, որ լուսադեմին հասնենք որսատեղը պահելու:

Ես էի, որսկան Օսեփն էր ու մեր գյուղացի մի տղա, որ Օսեփի շալակտարն էր:

Մենք գնում էինք էն դաժան հրճվանքով, որով միայն որսի են գնում: Ճամփին որսից էինք խոսում:

— Որսը բախտի պես բան է,— ասում էր Օսեփը: — Մին էլ տեսար երևութք էլավ ու քամի դառավ կորավ: Անսովոր մարդը նրան հեշտ չի նկատի: Կշփոթվի, կդոդողողա, կփախցնի: Աչք առնելուն պես պետք է թվանքդ բացվի. թե չէ, որ ուզեցիր նշան դնես, մինչև աչքդ ճպես, նա սարն անց կեցավ:

— Հապա դուք ինչպե՞ս եք որսի ման
գալիս, ուստա Օսեփ:

— Լավ որսկանը ման չի գալ, նա
որսը կպահի,— պատմում էք
որսկանը:— Գիտի, ո՞ր ժամանակին,
ի՞նչ տեղ որսը ժած կգա, կզնա էն տեղը
կպահի: Թե ման էլ գա, թիշ, էն էլ էնպես
ման կգա, որ որսն իր քամին չառնի, թե
չէ՝ որսն էնպես սուր հոտառություն ունի,
որ թե քու քամին (հոտը) նրա վրա էլավ՝
պրծար, որտեղ որ է հոտդ առավ
կի⁸⁵ավ: Եսպես խոսելով իրիկունը
հասանք բոստանչի Օվակիսի դափին:
Շերունի բոստանչին փետ էք հավաքել,
կրակը վառել ու կողքին թիճկը տվել:

— Բարի բիգուն, Օվակիս բիձա:

— Այ աստծու բարի ձեզ, դուք
բարով եկաք. ա'յ տղա էդ ինչ լավ
դոնախներ եք: Ես հենց մենակ միտք էի
անում, թե մի զրիցընկեր ըլի... . Ես
հենց աստոծ հասցրեց ձեզ... . —
ուրախացած զողողոում էք Օվակիս
բիձեն:

— Դու են ասա՝ որս ա ժած գալի, թե
չէ, Օվակիս բիձա,— անհամբեր հարց
տվավ որսկանը:

— Այ տղա, մի անտեր պախրի
բուղա կա, Օսեփ ջան, գիշերները գալիս
ա, լոքին ուսում ու զնում: Էնքան լոքիս
փուչ արավ. թվանք շունեմ, շուն
շունեմ... . Պախրա մի՛ ասիլ, մի սար
ասա: Չարդախ ունի (պոզեր), ոնց որ մի
կաղնի:

— Եղ մինը ոչինչ. բա իսկի
բուղագոռոցի ձեն չի գալի:

— Այ տղա, Էլ ասում ես, ինչ անես, քնահարամ են արել: Երեկ գիշեր ես վերի մատներումը հենց գոռում էին, որ զետինն որոսում էր:

— Հա՛յ, հոդ ու ջրի աստոծ, հա՛,— աղաղակեց որսկանը:

Օվակիմ քիձեն մեզ հրավիրեց, տակներս խոտ ածավ, ինքն Էլ կրկին թինկը տվավ իր տեղը:

— Տղերք, ես որ խորք միտք եմ անում, տեսնում եմ, որ աշխարքիս երեսին մարդիցն Էլ վերք անիրավ շնչավոր չկա:

— Ի՞նչի, Օվակիմ քիձա:

— Ինչին Էլ որի՞ն էս ասում. տեսնում ես՝ դուք թվանքներդ առել եք ետևներիցն ընկել, մենք Էլ ուրախացել ենք, թե ինչ ա՛ մի պախրա կսպանենք, կուտենք: Ախր չէ՛ որ նա Էլ մեզ նման շնչավոր կենդանի ա, իրեն կեսզիշերին էրվելով գոռում ա, ձեն ա տալի, իր կովին կանչում. չէ՛ էն Էլ նրա սերն ու մուրազն ա . . .

— Թե ձենք դուրս կգա՛, ես նրա սերն ու մուրազը նշանց կտամ,— ծիծաղելով բացականչեց որսկան Օսեփը:

— Չէ՛, շատ մեղք բան ա, շա՛տ, — զլուխը շարժելով կրկնեց բոստանչին ու ձենք ավելի բարձրացնելով, կանչեց.

— Տղերք, ես ա որ պախրիցը խոսք լեզավ, ես ձեզ մի բան պատմեմ: — Պատմի, Օվակիմ քիձա:

— Մի տարի սարումն էի: Եկան, խաբար բերին, թե քա թոռդ հիվանդացել ա, թեզ ուզում ա, արի: Սարիցը վեր կացա, հիմի տուն եմ գալի: Ճամփին ծովեցի, ասի կարելի ա որսից, բանից պատահի: Ման եկա, ման, մի տեղ տեսնեմ բրնուտումը մի քան խշխացնում ա, թփերը ժաժ ա տալի: Ախալեր, ես թե մոշահավ ա, մոշահավի քան չի, թե անասուն ա, ինչի՞ չի երևում: Մի քար զցեցի թփուտը. մին էլ տեսնեմ՝ մի պախրի ճուտի ականջներ զցվեցին, ել ես ցածացան, ու սկսեց թփերը ժաժ տալ, ճամփա քաց անել, որ փախչի: Թվանքն երես կալա հենց թփերի էն ժաժ էկող տեղը: Թվանքը որ տրաքեց, սա վեր թռավ, դուրս էնկավ ու ես գետնովը դիպավ: Տղերք, հիմի մի ձեն ա ածում, մի տնքում ա, ոնց որ մեռնող երեխա: Ուստա որսկաններից լսել էի, ասի՝ ես ա, սրա մերը ինձ տեսել ա, էստեղից փախել, որտեղ որ է հիմի ես կզա: Մտա մի ծառի տակ, ճամփա պահեցի: Շատ մնացի թե քիչ, մին էլ տեսնեմ՝ հրես եկավ, քայց ո՞նց եկավ, ես տեսա, դուք ոչ տեսնեք. մի խոսքով, մոր նման, թվանքի ձենը իր երեխի վրա լսած մոր նման: Եկավ տեսավ իր ճուտը հրես անշունչ, արճակոլու մի ծառի տակ փուլած: Տղերք, դունչը մեկնել ա, ոնց ա տխուր մզգացնում, ոնց ա վերքը լիզում. . . Թվանքը վեր կալա, էղտեղից քաշվեցի, եկա տուն: Եկա տուն. եկա տեսա երեխեն դժար ա, հոգու հետ կոհվսն ա տալի, տնքում ա: Տղերք, էն օրը չի, էն օրվա աստոծն ա. Էնպես էն պախրի ճուտի նման ա տնքում, որ աշք խուփ եմ անում, հենց իմանում եմ՝ դեռ էն թփի կողքին եմ կանգնած: Վերջապես երեխեն մեռավ. հիմի մերն ընկել ա վրեն

և բառաշում ա . . . Ասում եմ, փառքի
շատ ըլի, աստոծ, ի՞նչ ա մեր ու Էն սարի
պախրի զանազանոթյունը՝ ոչինչ . . .
ամենի սիրտն էլ սիրտ ա, ամենի ցավն
էլ՝ ցավ . . .

Օվակիմ բիձու տխուր պատմոթյան
տպավորության տակ միաժամանակ
լուս էինք:

— Օվակիմ բիձա, չէ որ ասում են
պախրեն էլ տեր ունի,— խոսեց
շալակտար Ղազարը:

— Ունի, բաս, պախրեն մեծ տեր
ով ⁸⁷ — Ետնա էդ դրո՞ւստ բան ա:

— Դրուստ ա, բաս: Որսկան
Փիրումն ինքը գլուխ որսկան էր, ու նրա
զնդակը իր օրումը գետին չէր ընկած:
Մի անգամ մի պախրա ա վիրավորում:
Պախրեն փախչում ա, սա ընկնում ա
ետևիցը: Քշում ա տանում հասցնում
Զորավոր կաղնըքու տակը: Էստեղ,
Զորավոր կաղնըքու տակին, պախրեն
չոքում ա. պախրեն չոքում ա, որսկան
Փիրումը թվանքն երեսն ա կալնում: Հենց
էս տժժան բռպեկին Զորավոր կաղնըքուց
մի դուռն ա բացվում, մի սիրուն հարսն ա
դուրս գալի. Էս սիրուն հարսը դուրս ա
գալի՝ որսկանի դեմք ծղրտում.

— Ի՞նչ ես հալածում իմ անմեղին,
անիրավ մարդ, ի՞նչ ա արել քեզ:
Ազա՛հ, ոչ կշտանաս դու, որ չես
կշտանում լիբն աշխարհում: Թվանքդ
արնով լցվի, զնդակդ խմոր դառնա,
չորանա էդ թվանքը բռնող կուոր . . .

Միայն որսկան Փիրումը խելոք մարդ
էր, գլխի ա ընկնում, որ էս որսի տերն ա,

ձեռաց թվանքը գցում ա մի ծառի ճյուղի, անիծելուն պես ծառի ճյուղը տեղնուտեղը չորանում ա:

— Օվակիմ բիա, ուրեմն էդ ա, որ ասում են՝ որսկանությունը անիծած ա:

— Անիծած ա, բաս, մին որսկանությունը, մին էլ ձկնորսությունը, երկուսն էլ անիծած են: Հնուց դրած նզովք ա, որ որսկանի ու ձկնորսի փորք կշտանա ոչ: Որսկանի վրա Քյարամն էլ նզովք դրեց: Երբ էրվելով իր Ասլու ետևից ման էր զալի՝ մի վիրավորված պախրա տեսավ: Տեսավ՝ անասունը մղկտալով շունչը տալիս ա, հորթն էլ մոլորած մնացել ա կողքին կանգնած, էստեղ սազն առավ ու մի խաղ ասավ:

Մենք խնդրեցինք Օվակիմ բիան, որ էդ խաղն ասի մեզ համար, ու ծեր բոստանչին իր պառավ ձենով խարույկի առաջ երգում էր մութը ձորում.

Ճե՛յ, պարոններ, տեսա կանանչ զարունքին՝

Ես սարերում լաց էր լինում մի պախրա. Սիրուն հորթը մոլոր կանգնած իր կողքին՝

Ես սարերում լաց էր լինում մի պախրա:

[88]Գընդակն առած գընում էր փուշ աշխարհից,

Գանգատվելով մարդու անզութ արարից,

Արյուն տալով, մըղկըտալով իր վերքից

Ես սարերում լաց էր լինում մի պախրա:

Աստված սիրող՝ որսին թըվանք չըբռնի,

Երկինք սիրող՝ որսի միաը թող չառնի.

Դարդու Քյարամ տեսավ ծովում

արյունի՝

Ես սարերում լաց էր լինում մի պախրա:

* * *

Ամենքը քննցին, ես մնացի զարթուն:
Գիշերն էս տեսակ տեղերում անսովոր
մարդը չի կարողանում քնել, հազար ու
մի ձեն է լսում, հազար ու մի բան է
երևակայում:

Են անշուշտ գիշերվա հովն էր, որ
շարժում էր սիմինդրները, բայց ինձ
թվում էր, թե Օվակիմ բիձու ասած
պախրեն էր բռստանը մտել: Գիշերվա
մթության մեջ հեռվում սև
կերպարանքներ էին երևում ու կարծես
շարժվում էին:

Ու անքուն էի ես:

Գիշերվա մի ժամին դուրս եկա
դափի դուռը: Պարզ աշնանային գիշեր
էր: Չոր ցուրտը սեղմում էր: Չորերը խոլ
թշում էին: Նրանք էլ ասես քնել էին,
Օվակիմ բիձու նման փշացնում էին
խոր ու հանգիստ:

Բայց Քարվան-դուն աստղը արդեն
դուրս էր եկել. մեր ճամփա ընկնելու
ժամանակն էր: Ես վեր կացրի իս
ընկերներին: Նրանք շտապով հազան
իրենց տրեխները, ու վեր կացանք դեպի
Եղնուտի կիրճը . . .

* * *

Արշալույսից առաջ մենք դարան
էինք մտած Եղնուտի կիրճում: Ես իմ
դիրքից պահում էի առաջիս ընկած
բացատը: Դիմաց կանգնած էր խոր ու
անթափանցելի մութն անտառը:

Հետզհետե գիշերվա խավարն սկսեց
նոսրանալ: Ժայռերը խոժոռ,
քնարաքախ դուրս նայեցին աղջամուղի
մի¹⁸⁹ց: Երկինքն սկսեց գունատվել ու
պարզվել: Ապա երևաց Եղերուն՝
Լուսաստղը: Վերկացավ վաղորդյան
զեփյուրը: Ծաղիկները շարժեցին իրենց
զլխիկները, խոտերը դողդողացին,
տերևները շրջացին: Անտառն սկսեց
զարթնել: Մոտակա թփից մի ծիտ ձկաց,
մի ուրիշը՝ մյուս թփից, մեկն էլ՝
հեռվից . . .

Ես աննկատելի դուրս էի եկել իմ
քաքստից ու զմայլած դիտում էի շուրջ՝
բնությունը, են սրբազն ժամին, երբ
ծագում է առաջին լույսը:

Հանկարծ մի ձայն . . . չորացած
ճյուղ կոտրվեց մոտիկ անտառում:
Նայում եմ էն կողմը: Անտառը
տակավին մուրն է: Աչք չի որոշում, թե
ինչ կա էնտեղ, միայն պարզ լսում եմ
զգույշ ոտնաձայնը, որ խաշամը կոխելով
առաջ է զալի՝ խը՛շտ, խը՛շտ, խը՛շտ . . .
Բան չի երևում, բայց դարձյալ խը՛շտ,
խը՛շտ, խը՛շտ, մոտենում է ավելի ու
ավելի . . . Եվ, ահա, դուրս եկավ . . .

Ես առաջին անգամն էի տեսնում
Եղերուն ազատ բնության մեջ: Նա
դուրս եկավ մի խաղաղ հպարտությամբ,
վեհ ու չքնաղ, ինչպես բնության էն ամեն
զեղեցկությունների տերն ու թագավորը:
Կիսովին, դեռ անտառի մթության մեջ

կանգնեց, թուխ դունչը դրավ գետնին, ապա թե զլուխը բարձրացրեց, վայրենի շնորհը ոլորեց երկայն վիզը ու նայեց իմ կողմը:

Ամենագեղեցիկ հայացքը, որ ես տեսել եմ իմ կյանքում:

Ես շփոթվեցի, ամաչեցի, ուզեցի թարցնել հրացանս... Շարժվեցի թե չէ՝ նա շտապով ետ թեքեց իր կարապի վիզը. Վիզը ետ թեքելուն պես հարևան դիրքից որոտաց որսկան Օսեփի հրացանը: Հրացանի ձայնից անտառն որոտաց ու սկսեց ճոճով: Են եղջերուն էր փախչում:

— Ճա՞յ, քո սունը չքանդվի,— ինձ հանդիմանելով դուրս քոավ որսկանն ու վազեց դեպի մոտիկ քլուրը, տեսնի՝ ո՞ր կողմից կերևա փախած որսը: Առավոտը բացվում էր, և էնքան լուս էր, որ կարողացանք կանանչ խոտերի վրա գտնել թարմ արյան հետքը:

Վիրավորված էր եղջերուն: Արյան ¹⁹⁰ թոքը բռնեցինք ու գնացինք որոնելու: — Էսքան որ արյուն է տվել, ինչքան ուզում է գնա՝ մերն է,— հայտնեց որսկան Օսեփը:

* * *

Իրիկնապահին նրան գտանք մի խոր անտառում: Նա ընկած տեղից իր երկայն վիզը մեկնեց մեզ վրա: Ես տեսա՝ ինչպես չէր կարողանում զլուխը պահի, շարժում էր անդադար ու նայում էր մեզ իր պղտոր, շշկլած, անորոշ

հայացրով: Հանկարծ կարծես զլիսի ընկավ, աշխատեց վեր կենա, ծնկները վեր բարձրացրեց ու կրկին ճշդիալով ընկավ իր արյան մեջ՝ մի ծանր, անզոր թառանչով:

Որսկանը վրա վագեց . . . Ես ուզեցի մի բան ասեմ, ամաչեցի . . . Նա բռնեց եղերվի գլուխը, ոլորեց գեղեցիկ վիզը . . . Ես կրկին ուզեցի մեջ մտնեմ . . . դարձյալ սիրտ չարի . . . Եվ ահա դաշույնը փայլատակեց . . .

Ես երեսս շրջեցի, իբրև թե սարերին եմ նայում: Ետևից մի խոլ տնքոց լսեցի . . . ու, չգիտեմ ինչու, սկսեցի մտածել կյանքի ու մահվան մասին, և էնպե՞ս տգեղ էր թվում ինձ կյանքը . . .

About this digital edition

This e-book comes from the online library [Wikisource](#)^[1]. This multilingual digital library, built by volunteers, is committed to developing a free accessible collection of publications of every kind: novels, poems, magazines, letters...

We distribute our books for free, starting from works not copyrighted or published under a free license. You are free to use our e-books for any purpose (including commercial exploitation), under the terms of the [Creative Commons Attribution-ShareAlike 3.0 Unported](#)^[2] license or, at your choice, those of the [GNU FDL](#)^[3].

Wikisource is constantly looking for new members. During the realization of this book, it's possible that we made some errors. You can report them at [this page](#)^[4].

The following users contributed to this book:

- Վազգեն
- Teak
- GeoO

-
1. [↑ http://wikisource.org](http://wikisource.org)
 2. [↑ http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0](http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0)
 3. [↑ http://www.gnu.org/copyleft/fdl.html](http://www.gnu.org/copyleft/fdl.html)
 4. [↑ http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium](http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium)